Տեղեկանք «Սպիտակ Ձեռնափայտ» Հասարակական կազմակերպության գործունեության, կատարված և ընթացիք ծրագրերի մասին:

Երկար տարիների համագործակցության փորձը տարբեր հասարակական կազմակերպությունների հետ ցույց տվեց բազմաթիվ չլուծված խնդիրներ մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդության շրջանակներում (մարզերում երիտասարդների իրազեկման, առողջ ապրելակերպի խթանում և ունենալ ներառական հասարակություն) և բնապահպանության ոլորտում: Ունենալով գաղափարներ և բարձր պատասխանատվություն նշված հիմնախնդիրների լուծմանը , եկանք այն որոշմանը , որ հիմնադրենք հասարակական կազմակերպություն:

2019 թվականի սկզբին հիմնադրեցինք «Սպիտակ Ձեռնաձայտ» Հ/Կ-ն: Կազմակերպությունը հիմնադրվելուց անմիջապես հետո հանդես է եկել բազմաթիվ առաջարկներով , տարբեր ոլորտներում՝ հասարակական տրանսպորտի, աջակցող սարքերի, միջավայրային մատչելիության, ներառական կրթության, Մատենադարանում բրայլյան գրքեր համալրելու և այլն: Կազմակերպության ձեռքբերումներից է ավելի քան հինգ տասնյակ կամավորների անդամակցությունը:

2019 թվականի ընթացքում կազմակերպությունը հասցրել է կատարել երկու դրամաշնորհային ծրագրեր. Սպորտի և երիտասարդության նախարարության ֆինանսավորմամբ իրագործել ենք երիտասարդական ներառական արշավներ: Արշավները կատարվել են չորս մարզերում՝ Արագածոտն, Գեղարքունիք, Տավուշ և Լոռի:

ԵՀԽ հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրագործել ենք երիտասարդական էկո-արշավ ուխտագնացությունը: Որի շրջանակներում կատարվել են ներառական սեմինարներ բնապահպանության և առողջ ապրելակերպի խթանումը երիտասարդների շրջանակում: Ծրագիրը իրականացվել է Կոտայքի մարզում և Երևանում: Ամբողջ տարվա ընթացքում կատարել ենք սոցիալական իրավունքի խորհրդատվություն և տեսողական խնդիրներ ունեցողների համար հեռավար ուսուցում SS ոլորտի: Նոր տիպի կորոնավիրուսով և պատերազմով պայմանավորված այլ գործունեություն չի իրականացվել: 2021 թ-ին որպես գործընկեր կազմակերպություն Fundacja HumanDoc հիմնադրամի հետ իրականացրել ենք՝ հասանելիություն սահմաններից դուրս, չտեսնող-չլսող անձանց համար տեղեկատվության մատչելիության զարգացում (Accessibility across borders. Development of information accessibility for the deaf and blind person)ծրագիրը, որի շրջանակներում մայիսի 8-12-ը Վրաստանում հինգ հոգանոց բազմամասնագիտական պատվիրակությամբ մասնակցել ենք աջակցություն Հարավային Կովկասում չտեսնող-չլսող մարդկանց խորագրով առաջին միջազգային հանդիպմանը, և իրականացվել է փորձի փոխանակում հարավային կովկասի երկրների հաշմանդամության խնդիրների և ծառայություններին թեմաներով:

13.12.2021թ-ին ՀՀ-ում իրականացրել ենք կլոր սեղան հանդիպում , որի ժամանակ արտասահմանյան մասնագետները ներկայացրել են տեղեկատվության հասանելիության չափորոշիչները Եվրոպայի միության և արևելյան գործընկերության երկրներից Մոլդովայի փորձը, որին ներկա են գտնվել ՀՀ գերատեսչություններից և տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ կառավարության հետ համագործակցելով իրականացվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում Ներառական երիտասարդական կենտրոն հիմնելու ծրագիրը, ծրագրի ընթացքի առաջին կարևոր քայլերից է կառավարության կողմից աջակցելը, որը ներկայացնում ենք կից փաստաթղթով:

«Սպիտակ Ձեռնափայտ» ՀԿ-ի Նախագահ Վ. Արզումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«13» 10 2021 թ. N ԿԱ/15.2/ԲԳ/710

<<Սպիտակ Ձեռնափայտ>> ՀԿ-ի նախագահ
Վ. Արզումանյանին
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան
7-րդ թաղամաս, 13 շենք

Հարգելի՛ պարոն Արզումանյան

<<Սպիտակ Ձեռնափայտ>> հասարակական կազմակերպության նախագահի դիմումը՝ ուղղված ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, վերահասցեագրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

Գրությամբ բարձրացված՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դպրաբակ բնակավայրի 1-ին փողոց 39 հասցեում գտնվող, ՀՀ սեփականություն հանդիսացող ամբուլատորիայի նախկին շենքը <<Սպիտակ Ձեռնափայտ>> հասարակական կազմակերպությանը տրամադրելու հարցը քննարկվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ:

Քննարկման արդյունքներով հայտնում ենք, որ ամբուլատորիայի նախկին շենքը <<Սպիտակ Ձեռնափայտ>> հասարակական կազմակերպությանը տրամադրելու հարցում առարկություններ չկան:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է ՀԿ-ներին ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի թիվ 304-Ն որոշմամբ հաստատված

ի 5-րդ և 6.2 կետերին համապատասխան՝ ծրագրի օրինակելի ձևին համապատասխան ծրագիր ներկայացնելու դեպքում /կցվում է/:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

10/13/2021

ԱՐԹՈՒՐ ԱԶԱՏՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: AZATYAN ARTUR 3503710396

Ա. Ազատյան

գլխավոր քարտուղարին փոխարինող